

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի երկրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2021 թվականի երկրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2982 թղթակցություն, առաքվել՝ 2885 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ ազգային ժողովից՝ 4 . ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 82 , ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 325, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 312, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 663, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 958, գաղտնի թղթակցություն՝ 24. քաղաքացիներից՝ 614 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է հասցեագրվել 52 դիմում, որից՝ ՀՀ ազգային ժողովից 2, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 31, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 12, հանրապետական գործադիր մարմիններից՝ 7;

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

Ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն; Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ;

2021թ. երկրորդ եռամսյակում կատարվել է 80 քաղաքացիների ընդունելություն;

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում;

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով;

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: